- 22/ And he planted a great and delightful garden with all the fruit which was on the earth and he did not give himself up to the fruit of the garden, but he labored for the needs of others.⁶⁹³ And the Lord God transferred him from the earth for many reasons.
- 23/ First, because of Cain's grandson, Lamech, who killed Cain and his son for the sake of removing jealousy from their generation. When he⁶⁹⁴ saw Enoch, he was so conflicted by virtue, so that he wished to please God, he was inflamed and wished to kill him, as Cain (had killed) Abel.⁶⁹⁵
- 24/ Second, because he separated himself from this earthly heritage, God transferred him to inherit the land of the living, and his conduct and transferral gave us all hope of the firmament.⁶⁹⁶
- 25/ Third, because when for love of the Edenic Garden, he himself planted a garden and did not enjoy (it),⁶⁹⁷ the Lord transferred him to the divinely planted Garden.
- 26/ Fourth, in exchange for his not eating this perceptible and corruptible fruit, he will always eat the incorruptible and unrotting fruit.
- 27/ Sixth,⁶⁹⁸ because he did not reckon himself worthy of looking at the heavens, which are God's throne, on account of this he was taken up in the body to encounter God in them, and to the vision of the luminous Seraphs and Cherubs who are the thrones of the increate God.⁶⁹⁹
- 28/ Seventh, so that we might understand that not only Elijah, who remained virginal and lived the ascetic life in the desert, was trans-

692. These two acts are found in various Armenian sources: Enoch did something related to gardens and fruit (planted a garden, refrained from fruit, etc.) and he did not look at the heavens, and in some texts as here put a sort of metal helmet on his head. They are discussed by Lipscomb 1990, 99–101 and Stone 2010 and are typical in Armenian.

693. Thus completing a statement about an ascetic life: he refrains from fruit, meat and meat products, and gives food to the need. See §28 below.

694. I.e., Lamech.

695. See the discussion of this tradition here pp. 92–93. There is confusion of the Cainite Enoch and the Sethite Enoch behind this statement. See the variant tradition in *History of the Forefathers* §16 and *Question* §5.3.

696. “Firmament” is odd here. Perhaps some form of *huunnigntʿu* “recompense, reward” has been confused with *huunayunipʿhin*, “firmament.”

697. Literally: remained without enjoyment of.

698. The fifth item in this list is lacking.

699. God sits on or between the Cherubs: Exod 25:22, Num 7:89, 2 Sam 6:2; 22:11, etc. The Seraphs in the Bible are not a throne for the Almighty.

ferred to the heavens, but let us take Enoch as an example who, being lawfully married, lived the ascetic life on the earth through fasts and prayers, and he inherited the luminous Garden and the immortal life. He prophesied about the end of this world and the just judgement and the recompense of the deeds of each of the righteous and of the wicked.⁷⁰⁰

- 29/ And after his transfer, two hundred persons of the race of Seth swore (an oath) and climbed mount Hermon, to live ascetically for the sake of immortality.⁷⁰¹ And Noah was with them and they were called “Sons of God.” For this reason, the race of Cain envied them and they learned wiles, they adorned their wives with rouge⁷⁰² and antimony.⁷⁰³
- 30/ And they took much food and drink and songful minstrels who were newly defined also in that time by the wiles of Satan. And they came and dwelt opposite that mountain. They ate and drank, blew trumpets and danced to the song of the minstrels and they pranced before them. When the ascetics saw that, one by one they climbed down to them. They ate and drank and had intercourse with them, and the sons of God became sons of perdition.
- 30/ But Noah alone was found steadfast in the oath to God and he lived through the trials and received the title of adoption by God.⁷⁰⁴ Noah was Lamech’s son, not (Lamech) the grandson of Cain who killed Cain, but Lamech, son of Methusaleh, son of Enoch.
- 26/ He lived in virginity from his boyhood for 500 years, until he received a commandment from God to take a wife and to beget sons and to build this Ark because of the future flood which was coming on account of the evil deeds of the time.⁷⁰⁵
- 27 For all flesh corrupted their ways in various evils. On account of this Noah did what God had commanded him and built the Ark for the

700. This sentence does not seem anchored to a biblical text, but to a tradition connecting Enoch with learning. See Stone 2010, 517–30, esp. 522, 527. See also Reed 2014, 149–87.

701. Observe that in 1 En. 6 two hundred angels swore an oath and descended on Mt. Hermon to lie with human women. Scholars connect “oath” with “Hermon” via the Hebrew root ḥ.r.m.

702. անգուր; see Stone 1996a, 177.

703. Reading ծաղուր as ծարիւր. This is the Euhemeristic reading of Gen 6:1–2 on which see the introductory remarks to 3.3 above. The text is close to *Concerning the Good Tidings of Seth*, but shorter, as it tells the stories of the Sethites and the Cainites.

704. Presumably an exegesis of Gen 6:9 “and Noah walked with God.” Arm Gen 6:9 reads, “And Noah was pleasing (հաճոյ) to God.”

705. The theme of Noah’s long virginity is widespread. See in this book text 3.8 §17.

salvation of his house. Through him may the Lord God save us from the fiery flood, through his prayers. Amen

4.6. JOSEPH AND JACOB: AN ALLEGORY

This text is found in M2111, fol. 229v. There is no indication of authorship and date beyond the date of the manuscript, a *Miscellany*, copied in 1652–1679. On the whole the text is a clear allegory, but there are on or two obscure readings, which are signalled in the notes.

Text

- 1/ Գրեալ է յԱրարածքն, թէ Յովսէփ տարաւ գորդիսն իւր առ Յակոբ նահապետն՝ զի օրհնեցէ զնոսա: Եւ եղեալ զՄանասէ յաջկոյսն Յակոբայ, եւ զԵփրեմ ի ձախմէ:
- 2/ Իսկ Յակոբ փոխեաց զաջ իւր ի զլուին Եփրեմօ. եւ զձախն ի Մանասէի: Եւ ասէ Յովսէփ՝ ոչ այնպէս հայր. այլ զաջ քո դիր ի վերայ Մանասէի. զի նա է աւագն. այլ Յակոբ գիտէր զինչ առնէր:
- 3/ Յակոբ ցուցանէ զԱստուած. եւ Յովսէփ ...⁷⁰⁶ եւ Բ որդիքն զմեծատունս եւ զաղքատս:
- 4/ Մանասէ կոչի զմոռացումս՝ որ ցուցանէ զչար մեծատունն. որք մոռացան զերախտիսն Աստուծոյ:
- 5/ Իսկ Եփրեմ ասի՝ պտղաբեր եւ լայնացեալ. որ նշանակէ զաղքատս հոգեւոր. որ բազում գոհութիւնս պտղաբերէ Աստուծոյ: Եւ թէպէտ աստ ի նեղութեան է, այլ լայնացեալ արձակի ի հանդերձեալն:
- 6/ Եւ զի մեծատունն է ի կեանս յայս աջկոյս. զի յաջողի նմա ամեն ինչ մարմնական:⁷⁰⁷ Եթէ տեսի զամբարիշտն վերացեալ բարձ<ր> անցի եւ ահա ոչ էր:
- 7/ Այլ աղքատն է ի ձախ կոյս. որպէս ասէ աղքատացեալն վասն մեր Քրիստոս. երանի աղքատացող հոգւով. զի ձեր է արքայութիւն երկնից: Եւ եթէ որ սիրէ զանձն արձակէ զնա. եւ

706. Illegible in the image: perhaps զայս, i.e., զԱստուծոյս, but if that is the reading, the meaning remains puzzling. The section commences the allegory.

707. Erasure of four words.

- որ ասեա<g> գանձն իւր յաշխարհս յայսմիկ ի կեա(abbrev).⁷⁰⁸
 զի աղքատն ի տառապանս եւ ի հալածանս կայ միշտ:
- 8/ Այլ յորժամ հայր մեր երկնաւոր Քրիստոս գայ ի դատաստանն, կացուցանէ զհոգեւոր աղքատս ընդ աջմէ իւրմէ ասելով. եկայք օրհնեցէք հօր իմոյ ժա.” Եւ չար մեծատունսն ի ձախմէ՝ ասելով. եթայք յին”
- 9/ Զի յայնմ աւուր զաջն ի ձախ. եւ զձախն յաջ փոխելոց է: որպէս յայտ է յաւետարանին որ ասէ՝ այր մի էր մեծատունն եւ ազագանէր բեռեզ.
- 10/ Դարձեալ մինչեւ ի Քրիստոս աջ էին հրեայք. եւ ձախ հեթանոսք. Իսկ զալստեամբ որդւոյն Աստուծոյ աջ եղեն հաւատովք ի Քրիստոս, որք կոչեցան նոր Իսրայէլ: եւ ձախ հրեայք անհաւատութեամբ՝ եւ աստուածասպանութեամբ.

Translation

- 1/ It is written in Genesis that Joseph brought his sons to the patriarch Jacob, so that he might bless them.⁷⁰⁹ And he put Manasseh at Jacob's right side and Ephraim at (his) left.⁷¹⁰
- 2/ Then Jacob transferred his right hand to Ephraim's head, and his left hand to Manasseh. And Joseph said, “Not thus, father, but place your right hand on Manasseh for he is the older.”⁷¹¹ But Jacob knew what he was doing.⁷¹²
- 3/ Jacob indicates God and Joseph the { }⁷¹³ and the two sons, the rich and the poor.
- 4/ He called Manasseh the forgetting,⁷¹⁴ which indicates the evil grandees who forgot God's beneficences.
- 5/ But Ephraim means, “Fruitful and broadened,” which signifies the

708. This and several other places uses an apocopation of a word, followed by an abbreviation mark in the form of a double quotation mark. Here it is կեա, which I have interpreted as from կեանք “life.”

709. Gen 48:1.

710. Gen 48:13–14, 17.

711. Gen 48:18.

712. Gen 48:19.

713. Illegible.

714. This is the usual meaning of Manasseh found in Gen 41:51 and in Armenian onomastic lists, see Wutz 1915, 914–15; Stone 1981, 140–41.

- spiritual poor one, who is fruitful with many praises to God.⁷¹⁵ And, despite the fact that here⁷¹⁶ he is straitened, yet the future (world) having become broadened, he will be freed.
- 6/ And because the wealthy is on this right hand side in this life, for every bodily thing succeeds for him. If I saw the impious being elevated, and passing on high, behold he was not.⁷¹⁷
- 7/ But the poor man is on the left hand side, just as Christ the one who became impoverished on our account, said, "Blessed (be) the poor in spirit, for yours is the kingdom of heaven."⁷¹⁸ And if he who loves his soul releases it, and he who hates his soul in this world, (is destined) for life,⁷¹⁹ since the poor always suffers and is always persecuted.
- 8/ But when our heavenly Father, Christ comes to the judgement he sets the spiritual poor man at his right hand, saying, "Come, let us bless my Father's inheritance"⁷²⁰ And the evil wealthy ones are on his left, saying, "Go to ..."
- 9/ For on that day the right will be exchanged for the left, and the left for the right, just as is revealed in the Gospel, which says, "There was a rich man, who was clothed ..."⁷²¹
- 10/ Again, up to Christ, the Jews were on the right and the gentiles on the left, but through the coming of the Son of God, the believers in Christ became the right, who are called New Israel, and the left (is) the Jews through unbelief and through decide.⁷²²

4.7. THIRD STORY OF JOSEPH

This homiletic narrative contains two different types of material. First, it retells in considerable detail the story of Joseph, his captivity, and his authority in Egypt, up to his commandment to his children and brothers to take his

715. This is the meaning Gen 41:52 gives for "Ephraim." See also Wutz 1915, 886–87; Stone 1981, 134–35.

716. Perhaps, "in this world."

717. The second half of this section, following the erasure, is somewhat obscure.

718. Matt 5:3.

719. Cf. John 12:25.

720. Here is another of these apocopations: *ḏu* can be taken *ḏanawṇuqləḥin*, "inheritance" reflecting Mat 25:34. The source of "right hand" is the preceding verse of Matthew and in fact the parable of the sheep and the goats in Matt 25:32 may lie behind the entire section.

721. Luke 16:19.

722. No biblical source could be discovered for this supersessionist passage.

bones out of Egypt (§§1–94: cf. Gen 37:2–50:25, and Exod 13:19). This narrative is close to the Genesis story, but does differ in a number of details as will be observed in the notes below. The one substantial section which is added to the biblical is Joseph's homiletic disquisition on his mother's grave as he left the Land of Israel in the hands of the merchants (§§26–37).

In addition to this passage, elsewhere the document contains a strong homiletic element, with hortatory remarks interwoven with the narrative and also a long section following the conclusion of the narrative (§§94–102). In §103 there is a pious prayer and invocation.

Textually, the document depends on the Armenian Bible or the LXX. Since Arm was translated from LXX, it is not always possible to distinguish between them.⁷²³ The text occurs in M2242, a seventeenth-century *Miscellany* on fols. 330r–349v. Another copy is found in M2245, 148v–158r, but was not available to me at the time of writing.

Text

- 1/ ⁷²⁴ / fol. 330r / Երրորդ պատմութիւն Յովսէփ գե[ղ]եցկին է եւ որդախտիին:
Այս Յակոբ ԲԺ-ան որդիս ունէր որոց անուանքն այս են. Ռութէն. Շմաւոն. Ղեւի. Յուդա: Սաքար. Զաբողոն. Դան. Նեփթաղիմ. Գադ. Ասեր. Յովսէփ. Բենիամին: Ի մէկ մօրէ ի Հոաքելայ. եւ սիրէր Յակոբ զՅովսէփ եւ զԲենիամին, առաւել քան զայլս. զի կրսէր էին քան զայլ որդիս.
- 2/ Եւ մայրն նոցա Հոաքել ի ծնանել զԲենիամին, մեռաւ ի ծնունդն. եւ Յակոբ առանց մայր⁷²⁵ սնոյց զԲենիամին:
- 3/ Եւ էին այլ որդիքն Յակոբայ խաշնարածք ի դաշտին: Եւ Յովսէփ եւ Բենիամին ի տան բնակէին առ հայրն իւրեանց Յակոբայ:
- 4/ Եւ յաւուր միում ի գիշերի տեսիլ ետես Յովսէփ, եւ պատմեաց եղբարցն իւրոց. եւ ասէ, տեսի յայսմ գիշերի. զի արտ հնձէաք ես եւ երկոտասան եղբայրքս իմ. եւ տեսի, զի օրեայքն եղբարց իմոց գային եւ երկրպագէին օրային իմոյ.

723. A. S. Zeyt'unyan's edition of Arm Genesis does not help in this task, see Zeyt'unyan 1985, and on this edition see Cox 1988, 87–125; Zeyt'unyan 1993, 306–12; and Cox 1993, 313–15.

724. Marked իւր in intercolumnar space.

725. A genitive would be expected.

- 5/ եւ լուեալ եղբարցն նորա ասէին⁷²⁶ցընդ⁷²⁷ միմեանս՝ միթէ այսպէս լինիցի սա. զի մեք մետասան եղբարքս նմա երկիր պագանեմք. եւ նա թագաւորէ ի վերայ մեր. եւ այսպիսի ոչ կամաց զճմարիտն ասելով մեկնէին զերազն յինքեանք. եւ այնու չարէին ընդ տեսիլն Յովսէփայ:
- 6/ եւ Յովսէփ դարձեալ կրկին ետես երազ. եւ պատմեաց հօր եւ եղբարցն. եւ ասէ յայսմ գիշերիս տեսի զի արեգակն եւ լուսինն հանդերձ մետասան աստեղօք՝ գային եւ ինձ երկիր պագէին:
- 7/ եւ լուեալ եղբարցն / fol. 330v / զչարացեալ եւ ոչ կամաց մեկնէին⁷²⁸ զերազն. եւ ասէին՝ զի միթէ թագաւորել կամի սայ՝ եւ մեք եւ հայրն մեր գամք յերկրպագութիւն սորա. եւ յայնմ օրէ ընդ ակամբ հայէին եղբարքն ընդ Յովսէփ. եւ ոչ կարէին տեսանել զնա:
- 8/ Տես զչար նախանձուն. զի որ զեղբարքն ի յատելութիւն դարձոյց. զի հանապազ չարէին զնա. եւ խորհուրդ արարեալ զի սպանցեն զնա. եւ դիպող ժամու ստիպէին. ո վ այս չար խորհուրդս եմուտ ի նոսա: եւ ապա յետ այսորիկ հեռագոյն էին գնացեալ եղբարքն Յովսէփու զհետ խաշանցն ի դաշտին:
- 9/ Եւ յայնժամ ասէ Յակոբ ցՅովսէփ որդին իւր՝ ա ո որդեակ հաց եւ տար եղբարց քոց ի դաշտին. եւ ունէր Յովսէփ պատմուճան ծաղկեա: Եւ յարեաւ առեալ զհացն եւ տանէր եղբարցն իւրոց՝ եւ մոլորեցաւ ի ճանապարհին: զի յիշէր զչարութիւն եղբարցն:
- 10/ Եւ ապա ի միտս իւր եկեալ՝ գայ գտանէ զեղբարսն իւր ի դաշտին. եւ իբրեւ տեսին եղբարքն զՅովսէփ՝ ասեն ընդ միմեանս այսպէս՝ ահա գայ երազատեսն. եւ արարին խորհուրդ սպանութեան եւ նենգութեան վասն Յովսէփու թէ որպէս կորուսցեն զնա:
- 11/ Ո վ չար նենգութիւն եւ նախանձու անօրէնութիւն, որ զերախտաւորն եւ զբարեգործ սպանանել կամէին. Յովսէփ նոցա հաց ի կերակուր տանէր. եւ նոքա սպանանել խորհէին:
- 12/ Ո վ չար նենգութիւն եղբարցն, զի ոչ է պարտ եղբայրս⁷²⁹ կոչել զնոսա. այլ մանաւանդ գազանս. զի ոչ զեղբօրս բանս գործեցին, այլ զչար գազանի եւ չար թշնամւոյն:
- 13/ Ո վ անդգնութիւն⁷³⁰ / fol. 331r / եղբարցն. զի Յովսէփ

726. նորա ասէին *inter lineas*.

727. The preposition g is corrupt. There is a correction here in the text.

728. Corrupt, omit ն.

729. j over g p.m. See Stone and Hillel, "Index," no. 49.

730. The word as written is not in NBHL. However, it might be a variant orthography of

- անմեղութեամբ եւ աշխատութեամբ կերակուր տանէր նոցա. եւ սոքա ի չար խորհուրդն սպանութեան մատնէին զՅովսէփ ի ճանապարհին. նոքա մոլորեալ ի չարն ընթացան. ով սքանչելեաց. զի թվեր թէ զայն յայտնէր մոլորելն Յովսէփայ ի ճա<նա>պարհին զնենգութիւն եղբարցն գուշակեաց՝ եւ ցուցանէր նմա Աստուած զհամբերութիւն, զի մի փորձեսցի. նեղ սրտութեամբ վասն չարութեան եղբարցն. զի զհտասցէ եւ Աստուած ապաւինեսցի, այն որ զճանապարհն ուղեց. նա կարօղ է որ զչար նենգութիւն եղբարցն ի բարի դարձուցանէ:
- 14/ Տեսէք եղբարք՝ եւ զգուշացարուք ի չար նախանձութեան եւ ատելութենէ աճի չարութիւն. եւ ի չարութենէ, բուսանի նախանձ. եւ ի նախանձէ, ծնանի ատելութիւն. եւ ատելութենէ, կատարի եղբայրասպանութիւն:
- 15/ Տեսէք եղբայրք. զի նախանձ չարութեանն եւ ատելութեանն՝ արար զԿայէն՝ եղբայրըսպան. եւ նոյն չար նախանձն արար զորդիսն Յակոբայ՝ եղբայրատեաց եւ սպանօղ. զնոյն եւ առաքեալն ասէ Յակոբ. թէ որ ատէ զեղբայր իւր մարդասպան է կատարեալ. զի չար նախանձով վառեալ եղբարքն Յովսէփու կամէին սպանանել զնա. Նոյնպէս նախանձն որ առ Հրէայսն էր որ չարացոյց զնոսա՝ մինչեւ զՏէրն մեր սպանին.
- 16/ զի Յովսէփ յաչս եղբարցն սպանած էր՝ բայց յաչս Աստուծոյ թագաւորելոյ սկիզբն արարեալ՝ նոյնպէս եւ Տէրն յաչս հրէից նախանձորդաց մեռեալ թվեր, բայց աստուածութեամբ կենդա / fol. 331v /նի էր. այլ որպէս զՅովսէփի{ի}ն⁷³¹ մերկացուցին եւ եղին ի գբին. նոյնպէս եւ զՏէրն մերկացուցին եւ ի խաչ հանին՝ եւ եղին ի գերեզմանի. զի նոյն ազգն էր որ զնոյն զործեցին՝ նոցա որդիքն էին՝ որ զայն կատարեցին. եւ որպէս նոքա զՅովսէփ վաճառեցին յԵգիպտոս Լ արծաթոյն. նոյնպէս եւ որդիք նոցա հրէայքն զՏէրն վաճառեցին ի խաչ հանել ընդ Լ արծաթոյ: եւ այս է նոցա չարութիւն զոր հարքն առին ի զինս Յովսէփայ. եւ որդիք նոցա էտուն ի զինս Քրիստոսի. եւ որպէս էմուտ Յովսէփ ի գուրն բանտին. եւ էմուտ Տէրն մեր ի տապան գերեզմանին. եւ որպէս էլաւ⁷³² Յովսէփ ի բանդէն եւ ի ծառայութենէն՝ թագաւորեաց ի վերայ երկրի.
- 17/ եւ որպէս եղբարքն որ վաճառեցին զՅովսէփ. տեսին զնա թագաւորեալ եւ անկան կործանեցան եւ զամօթի հարան վասն

սքանչելիւն “watchfulness” with the privative ան–.

731. Corrupt case ending. An accusative would be expected.

732. Postclassical form.

չար գործոց իւրեանց զոր գործեցին՝ առ Յովսէփ: Նոյնպէս յետ յարութեանն տեսեալ Հրէիցն զՏէրն յամօթ լինէին: Պարտ է մեզ վերստին դառնալ ի պատմութիւնսն. իսկ եղբարքն Յովսէփայ մինչդեռ էին ի չար խորհրդի. յայնժամ գայ Յովսէփ բերելով զկերակուր նոցա. եւ տուեալ ողջոյն. խանդաղամիտ սրտիւ. եւ եղ առաջի նոցա զհացն զոր եբեր:

18/ Իսկ եղբարքն չարութեամբ վառեալ էին. ոչ կամէին ուտել զկերակուրն՝ զոր Յովսէփ եբեր. այլ զչար խորհուրդս իւրեանց կամեցան ի գլուխ հանել. յայնժամ բռնոն հարին Յովսէփայ եւ մերկացուցին. եւ ընկեցին զնա ի գուր մի ցամաք: եւ ապա ինքեանք նստեալ ուտէին զբերեալ կերակուրն Յովսէփու ան / fol. 332r / հոգութեամբ. իբրեւ յաղթութեան ի՞նչ համարէին:

19/ Այսպէս եւ Հրէայքն առ Տէրն արարին, զպարգեւս Աստուծոյ առեալ եւ զպարգեւատուն. այսպն առնէին զՏէրն ի գերեզմանի դնելով յաղթութեան ի՞նչ համարեցան. եւ անհոգաբար զատիկն ուտէին:

20/ Եւ յայնժամ առեալ այժ մի զենեցին եւ զպատմուճանն Յովսէփու առեալ յարինն թաթխեցին. եւ ուղարկեցին առ հայրն իւրեանց եւ ասեն զայս գտաք ի դաշտին. տես թէ որդոյ քում Յովսէփայ է պատմուճանդ՝ քանզի գազանաբեկ եղեալ է:

21/ Ո՛վ վանմտութիւն եղբարցն զհանդերձն Յովսէփայ մերկացուցին եւ հօրն պատմեցին՝ զնա գազանաբեկ լեալ. յայտնի է որ զինքեանս արարին գազանս. եւ այնպէս գազանաբեկ ասաց զի ինքեանք եղեն գազանք չար խորհրդոգն վարժեալ խորհէին թէ զինչ արասցեն զնա. կէսքն ասէին եկայք սպանցուք զնա. կէսքն ոչ կամելով ասէին մի լիցուք արեան պարտական: Իսկ ոմանքն ի նոցանէ ասէին թողցուք զնա յանդրէն ի գրին զի անդ մեռցի:

22/ Եւ ապա մինչդեռ յանխորհուրդն էին. պատրաստեաց Տէրն որ կամէր զնա կեցուցանել. եւ յայնժամ քալրան եկեալ. եւ վաճառականք բազում ընդ անցանելով բարձեալ ոճտին եւ գնային յԵգիպտոս. տեսեալ զայն եղբարցն Յովսէփու ասէին ընդ միմեանս. եկայք վաճառեսցուք զՅովսէփ զի երթիցէ յօտարութիւն՝ եւ ի գերութիւն աշխարհ հեռի. զի ոչ կատարեսցի երազն նորա: եւ այն որ թագաւորել / fol. 332v / կամէր երթիցէ ի գերութիւն եւ խափանեսցի երազ նորա. եւ որպէս սուտ համարել. եւ յայնժամ առեալ հանին զՅովսէփ ի գբոյ անտի եւ վաճառեցին զնա եւ առին զգինն Յովսէփայ. Լ դէկան. եւ Յովսէփ համբերեալ նոցա չարեացն, եւ ոչ ստեր

- վաճառականացն թէ ի գուր վաճառեն զիս՝ զի կրսեր եղբայր եմ ես սոցա, զի վաճառեն զիս. ոչ ասաց այսց բանիցս Յովսէփ՝ եւ ոչ մի. եւ այլ ոչ յանդիմանեաց զչարութիւն եղբարցն:
- 23/ զայսոսիկ եւ Տէրն արար. զի ոչ յանդիմանեաց զհրէայսն. որ կատաղեալ էին չարեօքն ի վերայ Քրիստոսին մերոյ. որպէս Եսայեա մարգարէն ասէ. զհամբերութիւնն Քրիստոսի առ չարչարանսն, ոչ խստանամ. եւ ոչ ի դէմ դառնամ. զթիկունս իմ ետու ի հարուածս, եւ ծնօտ իմ յապտակս. եւ դարձեալ ասէ իբրեւ գոչխար ի սպանդ վարեցայ. եւ իբրեւ գորոջ առաջի կտրչի անմոռնչ կայ. այնպէս ոչ բանայ զբերան իւր. զայս կատարեաց Յովսէփի. զօրինակ Տեառն իւրոյ. զի ոչ հակառակեցաւ՝ վասն չարութեան եղբարցն:
- 24/ Զնոյն արար եւ Շուշան առաջի չար եւ դառն ծերոցն. զի նոքա վկայէին սուտ զբանս չարութեան ի վերայ նորա. եւ նա լուռ եւեթ կայր. եւ ոչ յանդիմանէր զստութիւն նոցա. մինչեւ Աստուած ի յերկնից նայեցեալ ետես. զանիրաւ պատուհասն՝ եւ յայտնէր զդատաստանն եւ զարդարն ապրեցոյցանէր. եւ չար սուտ վկայսն տանջէր պատուհասիւ: / fol. 333r /
- 25/ Այսպէս եւ մեզ պարտէ համբերել յորժամ գայցեմեզ գուր բանք, եւ փորձութիւնք. եւ յայնժամ տեսանէ Աստուած զհամբերութիւնն մեր. եւ փրկէ զմեզ ի փորձութենէ. եւ զչարախօսն մեր ամօթ առնէ. եւ յանդիմանէ զի ամենայն առաքինութեան զլուին համբերութիւնն է, որպէս զհամբերութիւն Յովսէփու. զի Յովսէփի համբերութիւն թարգմանի.
- 26/ եւ զի չար նենգութիւն եղբարցն որ վաճառեցին զնա. իսկ Աստուած զչարութիւն նոցա ի բարին փոխարկեաց Յովսէփու. այնպէս առնէ Աստուած ամենայն մարդոյ որ համբերէ փորձութեանց. զչարութիւն չարեացն ի զլուի նոցա դարձուցանէ. եւ զհամբերօղն փրկէ ի փորձութեանց:
- 27/ Եւ յայնժամ վաճառականքն հանին զՅովսէփ ի վերայ ուղտոյ եւ զնացին զճանապարհն իւրեանց. եւ եկին ի տեղին յորում մայրն Յովսէփու Հռաքել թաղեալ կայր.
- 28/ իբրեւ ետես Յովսէփի զգերեզման մօրն իւրոյ. ի վայր անկաւ յուղտոյն՝ եւ ընթացեալ անկանէր ի վերայ գերեզմանին մօրն եւ լայր դառնապէս. աղիոգորմ արտասուսն փախսփաղ թափէր յաչաց նորա. մինչեւ ամենայն վաճառականքն ընդ նմա լացին.
- 29/ եւ ձայն բարձեալ ողբական՝ եւ խանդաղատական գթո՜քս առ մայրն ասէր այս. ու՛ր ես մայր իմ սիրելի. արի՛ տես զքո սիրելի որդիս զՅովսէփ. զիարդ վաճառական ուր եմ ի գերութիւն.

այրի մայր իմ տես զորդեակս քո՝ զի գնամ օտար աշխարհ. ո՛վ մայր իմ ոտն կաց եւ / fol. 333v / տես զորդիս քո զՅովսէփ, զոր դու ազատ ծնար, այժմ ի ծառայութիւն վարիմ՝ ի ձեռաց եղբարց իմոց. զի զոր⁷³³ դու ազատածնար արարեր նոքա ի ծառայութիւն ետուն. տես մա՛յր իմ՝ զի զորդիս քո անօգնական գնամ ի գերութիւն, եւ ոչ ունիմ զոք՝ զի ընդանաբար հոգասցէ գլինէն:

- 30/ Ո՛վ մայր իմ՝ բաց զաչս քո. եւ տես զվիշտս եւ զնեղութիւնս որդւոյ քո Յովսէփու. զի դու ի գերեզմանիդ անհոգ⁷³⁴ ննջես՝ եւ մայրական գութ քո առ որդիս քո՝ լռեալ է. ոչ տեսանէք⁷³⁵ զորդիս ձեր ի չար եղբարցն. իբրեւ զգառն ի մէջ գայլոցն վարատեալ. եւ ի ծնողաց վարատեալ եւ հեռացեալ. այլ ոչ գիտեմ թէ զինչ լինելոց եմ.
- 31/ Ո՛վ մայր իմ տես զորդի քո զի գնամ յօտար երկիր՝ եւ այլ ոչ տեսանեմ զգերեզմանս քո. տե՛ս մայր իմ Հռաքէլ զորդիս քո՝ զի երթամ ի գերութիւն վաճառել, եւ ոչ ունիմ զոք որ գերեղարձ առնէ զիս:
- 32/ Ո՛վ մայր իմ Յովսէփու՝ բաց զաչս քո եւ տես զգերութիւն իմ. զի թէպէտ դու հայրենիքն⁷³⁶ քո գողացար, ոչ զի պաշտելի գկուոսն՝ այլ զի խափան լիցիս այլոց կռապաշտիցն: Իսկ այժմ զորդիս քո սիրելի գողացեալ է եղբարցն վաճառեցին. եւ հօրն իմոյ գազանաբէկ ասացին լինել զիս:
- 33/ Ո՛վ գերութիւնս Յովսէփու որդոյ քո սիրելոյ. մայր իմ սիրելի հայեաց եւ տես զտառապանս որդւոյ քո՝ զի անպատճառ գնամ ի գերութիւն եւ ոչ զոք / fol. 334r / ունիմ օգնական. ի քէն վաղ զրկեցայ մայր իմ Հռաքէլ. եւ ի հօրէ եւ սիրելի եղբօրէս Բենիամենէ. այսօր հեռանամ. եւ ոչ ունիմ ակն թէ տեսանեմ զձեզ. ո՛վ մայր իմ ի քէն մահուամբ հեռացայ՝ եւ ի հօրէ եւ յեղբօրէս ծառայութեամբ հեռանամ:
- 34/ Տեսանէք ո՛վ այրք եւ վաճառանք եւ օգնեցէք յաղէտիս իմոյ՝ եւ լացէք զիս զայսպիսի թշուառական մանուկս. եւ թոյլ տուք ինձ⁷³⁷ սակաւիկ մի. զի լացից զմահ մօր իմոյ՝ եւ զգերութիւն անձին իմոյ:
- 35/ Ո՛վ մայր իմ Հռաքէլ՝ հայեաց եւ տես զչար նախանձ եղբարցն.

733. Above line p.m.

734. Above line p.m.

735. Sic.

736. The case is unusual, being nominative, where an ablative would be expected.

737. Above line p.m.

զի որպէս չարացան սպանանել զիս եւ կորուսանել. բաց զաչս քո՝ եւ զարթիր ի գերեզմանէդ մայր իմ, զի այսօր որդի քո օտարանամ ի քէն՝ եւ այլ ոչ եւս տեսանեմ. զայս չարութիւն եղբարց իմոց որ նախանձու դրկեցին⁷³⁸ զիս՝ ի սիրելի եղբօրէն եւ ի ծնօղաց իմոց. անյոյս արարին զիս. եւ զի անշունչ ես մայր իմ, եւ անմօռնչ լեալ:

- 36/ Եւ ապա վաճառականքն մսիթարեցին զՅովսէփ. թափել զարտասուսյաչացն. եւ զսուգն ի մտացն. եւ առեալ գնահանին ի վերայ ըղտոյն. եւ այսպէս ասէ Յովսէփ առ դիմաց գերեզմանին մօր իւրոյ. ողջ փա մայրիկ իմ՝ զի գնամ օտարութիւն, եւ այլ ոչ եւս տեսանեմ զգերեզմանս քո մայր իմ. եւ ո՛վ պատմեացէ զայս հօր իմոյ. զի գերութիւն գնամ եւ ոչ եմ լեալ կերակուր գազանի. / fol. 334v / եւ զայս ասէր՝ ողջ փայ մայր իմ, եւ ողջ փայ հայր իմ, եւ ողջ փայ երախտաւոր եղբայր իմ Բենիամենի՝⁷³⁹ զի դուք ոչ զիտէք, զի ես ի գերութիւն վաճառեցայ. եւ ոչ եմ լեալ գազանաբէկ:
- 37/ Ողջ փայ երկիր գերեզմանաց իմոց ծնօղաց զի այլ ոչ տեսանեմ<p>⁷⁴⁰ զձեզ աչօք իմովք: Բայց թէ ոսկերք իմ հանց} իցեն⁷⁴¹ ի ձեզ: Ողջ փացէք գերեզմանք նախահարց իմոց. Աբրահամու եւ Սահակայ եւ մօր իմոյ Հռաքելի. այլ զի ակն ոչ ունիմ տեսանել կենդանի աչօք իմովք. այլ մեռեալ ոսկերօք հանդիպիմ բնակիլ առ ձեզ:
- 38/ Ո՛վ աղետիս եւ թշուառական ժամուս զի որդի ազատոց, եւ ազատ ծնօղաց հեռացեալ յօտարութիւն եւ ի գերութիւն վարիմ եւ ոչ որ պատմեացէ զայս հօրն իմում Յակոբայ. զի որդին քո սիրելի Յովսէփ՝ ոչ է յափշտակեալ գազանաց, այլ ի չար նախանձու եղբարց վաճառեցին:
- 39/ Եւ յայնժամ ասէ Յովսէփ. հայր իմ եւ մայր իմ. թողին զիս՝ եւ դու Տէր Աստուած իմ մի թողուր զիս. օտար էի եւ եղբարց իմոց. եւ անծանօթ յաչս որդւոց հօր իմոյ. բայց դու Տէր Աստուած՝ որ եղեր ընդ հօր իմոյ Յակոբայ, մինչդեռ երթայր փախստական յեղբօրէ իւրմէ Յետուայ. նոյնպէս Տէր Աստուած մեր լեր ընդ իս. եւ մի թողուր զիս՝ եւ լեր ինձ պահապան եւ օգնական ամենայն տեղիս՝ ուր եւ երթիցեմ. զի ես ոչ զիտեմ թէ ուր զիս տանիցեն. զի դու Տէրդ որ կարօղդ եւ օգնեա ինձ ամենայն ժամ.

738. Postclassical form.

739. No reason for the oblique (genitive or dative) case of “Benjamin” is evident.

740. The plural should be emended to singular. It was created by dittography.

741. The first g was written by error and is surmounted by a dot as an erasure mark.

- 40/ եւ իբրեւ զամենայն կատարեաց Յովսէփի ի վերայ գերեզմանի մօրն / fol. 335r / իւրոյ. եւ յայնժամ առեալ զնացին զնա վաճառականքն՝ եւ իջուցին զնա յԵգիպտոս. եւ վաճառեցին զնա Պետաբփրեայ իշխանին Եգիպտացոց. եւ կացեալ Յովսէփի ի ծառայութիւն առ Պետափրայ ամս Է. եւ էր նմա հնազանդ. եւ Տէր Աստուած էր ընդ Յովսէփայ. ետ Աստուած շնորհս Յովսէփայ առաջիկն⁷⁴² իշխանին: եւ կացոյց Պետափրա զՅովսէփի ի վերայ ամենայն տանն իւրոյ՝ իշխան եւ հրամանատար ամենայն ծառայիցն նորա. եւ էր Յովսէփ <յ>իշխանութիւն.⁷⁴³ եւ ոչ ի ծառայութիւն ի տանն Պետափրայ.
- 41/ յայնժամ ետես սատանայ որ ոչ կամի զբարի մարդոյ. այլ չարութեամբ նախանձու վարի ընդ ազգս մարդկան առ ի կորուսանել զմարդիկք: Յայժմամ սատանայ եմուտ ի կինն Պետափրայ. որպէս ի ձեռն կնոջն զԱդամ եհան ի դրախտէն. եւ ամենայն տեղի կնոջով խաբէ զմարդիկք զամենեսեան եւ կորուսանէ. ջանայ սատանայ եւ այժմ ընդ Յովսէփի ի ձեռն կնոջն Պետափրայ, հանել զնա ազատական ի բնութենէն.
- 42/ զի Յովսէփի թէպէտ մարմնոքս ծառայէր. բայց հոգւոքս եւ մտօքն ազատ էր. նոյնպէս եւ ամենայն մարդ հոգւով եւ մտօքն ազատ է. թէպէտ եւ բիւր մարդկան ընդ իշխանութեամբ է ոչ է ծառայ. զի ծառայն այն է որ հոգին եւ միտքն ահիւ իւիք կապած է. զի հոգի որ մեղօք իւիք ընմբոնեալ է նմին եւ ծառայ կոչի. զի ծառայ ոչ այն կոչի որ մարմնոքս մարդկան ծառայէ. այլ ծառայ այն կոչի որ հոգւոքս է ծառայ. կամ ազահութեամբ. / fol. 335v / կամ մեղաց. կամ ընչից. կամ ցանկութիւն.⁷⁴⁴ կամ այլ ինչ եւ իցէ, ամենայն չարիք ի վերայ երկրի՝ զոր զործեն մարդիք, նոցին եւ ծառայ կոչին. զի որ ազահ է թէպէտ եւ թագաւոր է՝ ծառայ է ազահութեանն. նոյնպէս եւ չարիք եւ թէ ընչասէր է, ծառայ է ընչիցն եւ ոչ է ազատ. թէ շնացող է՝ նոյն շնութեանն է ծառայ, եւ ոչ է ազատ:
- 43/ Եթէ բարկացող է, սրտին է ծառայ. եթէ արբեցող է, զինոյն է ծառայ եւ ոչ է ազատ. եթէ յիսակալ է՝ սատանայի է ծառայ, զի սատանայ հանապազ գոխս ունի, եւ չարակնէ զմեր բարին, եւ յիսայ ընդ մեր առաքինութիւնն:
- 44/ եւ յիսակալ է եւ չարակն. եւ մախացող. եւ նենգաժոռ. ստախօս երբեմն ուրացող. եւ սուտ երդումս. հպարտ ամբարտաւան

742. Here *unnuqh* would be expected.

743. The preposition ի (*j-*) is called for, just as it occurs with the next noun.

744. An oblique case ending would be expected.

փառասէր շոգմոգ. հայհոյիչ. թշնամանօղս. բամբասօղ.⁷⁴⁵
գող. այսոքիկ եւ որոց⁷⁴⁶ սոցին նման են՝ սոքա սատանայի
կոչին ծառայքն եւ որդիք. զի ասէ Տէրն յաւետարանին որ
առ Հրեայն չար նախանձն. թէ դուք ի հօրէ սատանայի
էք, եւ զցանկութիւն հօրն ձերոյ կամիք կատարել՝ զի նա
մարդասպան էր ի սկզբանէ. եւ որ սուտ խօսի՝ իւրոց անտի
խօսի. զի ստութեան հայրն նորա սատանայ է. եւ որք սուտ
են՝ ստուգապէս ասեմք թէ որդի է սատանայի. այլ նոյն ինքն
բոլորովին սատանայ է. մարդ որ քսմոս է եւ բանսարկու ի
մէջ մարդկան եւ զխաղաղութիւնն ի խռովութիւն շարժէ. զի
թէպէտ խաղաղարարն որդի Աստուծոյ է:

45/ ապա ստոյգ խռովարարն որդի է սատանայի. եւ որ կերօղն է եւ
/ fol. 336r / ըմբօղն եւ արբեցօղն. նա որովայնի է ծառայ. որպէս
ասէ Պօղոս. լալով ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի,
որոց կատարածն կորուստ է, որոց աստուածն որովայնքն
իւրեանց է, եւ փառքն՝ ամօթն իւրեանց. գնոյն տէրն ասէ ի
յաւետարանին թէ գործէ զմեղս, ծառայ է մեղացն. զինչ եւ իցէ.
եւ արդ ահա այս ամենայն են որ ծառայեցուցանեն զմարդիք,
որք ընդ նոցա իշխանութեամբն իցեն. ի յայսմ ամենայնէ
ազատ էր Յովսէփ. թէպէտ եւ մարմնօք էր իշխանութեամբ
Պետափրայ. բայց ոչ էր ծառայ մեղաց եւ ցանկութեանն եւ
չարութեանն. զի եղբարքն որ վաճառեցին զնա. նոքա ծառայք
էին չար նախանձոյն. եւ Յովսէփ որ վաճառեցան ի նոցանէ
ազատ էր ի յամենայն չարեաց:

46/ Իսկ կինն Պետափրայ. որ տիկինն էր Յովսէփայ՝ կամեցաւ
ցանկութեամբ պատրել զՅովսէփ եւ խաբել. զի ընդ նմա
մեղս գործիցէ. բայց զի Յովսէփ աստուածային շնորհօքն
էր զարդարեալ. եւ էր գեղեցիկ տեսլեամբն ոչ խաբեցաւ ի
կնոջէն այնմանէ, այլ զտիպն հայրենի՝ հաստատուն պահէր
ողջախոհութեամբ զանձն զարդարեալ էր եւ կայր ի տանն
իշխանին իւրոյ. ազատաբար մտօք իբրեւ զվեմ հաստատուն:

47/ Իսկ կինն իշխանին այնչափ բորբոքեալ էր ի սիրոյն
Յովսէփայ. եւ ամենեւին ոչ կարաց զՅովսէփ հաւանեցուցանել
իւր ցանկութեանն. եւ ռիսացեալ էր⁷⁴⁷ ընդ Յովսէփու՝ զի ոչ
կատարէր զկամս ցանկութեանն տիկնոջն. եւ եղև յաւ / fol.

745. Above line p.m.

746. The oblique case of the relative pronoun is formed by attraction from the following word.

747. Above line p.m.

- 336v / ուր միում եւ երկոքեան միայն էին ի տանն. եւ յայնժամ բռնոն եհար կինն զհանդերձէն Յովսէփու. եւ կամէր զնա ինքն մերձեցուցանել: Իսկ Յովսէփ աստուածային զօրութեամբն՝ թոյլ ետ զհանդերձն ի կինն եւ փախեալ՝ եւ ել ի ձեռաց նորա:
- 48/ Իբրեւ տեսեալ կնոջն. թէ փախեալ Յովսէփ ի նմանէ՝ երկեալ⁷⁴⁸ ի միտս իւր եւ ասէ, մի գուցէ եւ յանդիմանեցէ զիս ի հրապարակս առաջին տեառն իմոյ:
- 49/ Ապա ինքն առաջեց. եւ յորժամ եկն Պետափրա ի տուն, եւ պատմեաց կինն առն իւրում. եւ ասէ՝ ի գուր վասն Յովսէփու ընդէ՞ր ածեր զօտար ծառայս ի տունս մեր՝ խաղբ եւ ծաղր կամէր առնել զմեզ. եւ հանեալ եցուց նմա զհանդերձս Յովսէփու՝ եւ ասէ, տե՛ս թէ զոր կամէր գործել ընդ իս՝ եւ զայդ իլել եմ ի ձեռաց նորա. եւ այսպէս զրպարտեաց զՅովսէփ. կինն չարութեան՝ խօսելով զչարն ի վերայ նորա. եւ յայնժամ բարկացեալ իշխանն ի վերայ Յովսէփու. եւ առաքեաց զօրականս՝ եւ եղ զՅովսէփ ի բանտին. ի զնտան թագաւորին. եւ այս՝ երկրորդ ծառայութիւն Յովսէփու:
- 50/ Բայց զի Աստուած ընդ նմայ էր ոչ եթող զՅովսէփ ի ձեռաց, այլ ընդ նմա եւ բանդ զնդանին մտանէր Աստուած. եւ տվեալ⁷⁴⁹ Աստուած շնորհս Յովսէփու. եւ ետ բանտապետն՝ զիշխանութիւն բանտին ի ձեռս Յովսէփու. եւ էր ազատ Յովսէփ՝ եւ ոչ ի ծառայութիւն բանդին: կացեալ Յովսէփ ամս Գ. եւ յայնժամ եղեւ բարկութիւն⁷⁵⁰ թագաւորին ի վերայ ծառայից իւրոց եւ երկոցունց՝ / fol. 337r / մատրովակին՝ եւ հացարարին, եւ առաքեաց զնոսա եղ ի բանդին՝ {որ}⁷⁵¹ էր Յովսէփ, եւ կացին անդ ի բանդին ծառայքն թագաւորին:
- 51/ Եւ եղեւ յաւուր միում ի գիշերին. զի երազ տեսին երկոքեան ծառայքն՝ եւ տրտմեալ էին յոյժ. եւ եմուտ Յովսէփ առ նոսա եւ ասէ՝ եղբայրք ընդէ՞ր տրտմեալ էք այսօր, եւ ոչ էք ուրախ իբրեւ զերեկն եւ զեռանդն. ասեն ծառայքն ընդ Յովսէփ. երազ տեսաք այսմ գիշերի՝ եւ երկուցեալ եմք՝ եւ ոչ գիտեմք թէ զի՞նչ լինելոց եմք, կամ զինչ բերէ մեզ երազն մեր: ասէ ցնոսա

748. + ի նմանէ with erasure dots, correction.

749. Notice the post-classical orthography.

750. This word is written above the line, in a similar, but perhaps not identical hand as the text.

751. This should be ուր “where.” See Stone and Hillel, “Index,” no. 407, but this should be added as a separate entry.

- Յովսէփ. ասացէք ինձ զերազն ձեր, եւ ես պատմեմ ձեզ թէ զի՞նչ լինելոց է ձեզ եւ պատահելոց:
- 52/ մին ասաց որ հացարար էր՝ տեսի զի այսմ գիրշերի սեղան մի լի հացիւ՝ եւ այլ կերակրօք զի բարձեալ էի <ի>⁷⁵² վերայ գլխոյ իմոյ՝ եւ գային բազում թռչունք երկնից եւ ուտէին զհացն եւ զկերակուրն. յայնժամ ասէ Յովսէփ. աստից Գ աւուր հանեն զքեզ ի բանդէս, եւ կախեսցեն ընդ ծառովս. թռչունք երկնից գան եւ ուտեն զմարմինդ քո. եւ յետ երից աւուրցն զոր ասաց Յովսէփ՝ այնպէս եղեւ. հանեալ զմուտպախն՝ կախեցին ընդ ծառով մի եւ կատարեցաւ երազն ի վերայ նորա:
- 53/ Իսկ մատրքովակն պատմեաց Յովսէփու զերազն իւր եւ ասէ՝ թէ եւ ես տեսի՝ յայսմ գիրշերիս. զի ունէի զոսկի բաժակն ի ձեռին իմում լի գինով. եւ կայի առաջի թագաւորին. յայնժամ ասէ ցնա Յովսէփ ի վաղիւն հանեն զքեզ ի բան/ fol. 337v /դէս եւ տանին առ թագաւորն՝ եւ հաստատեն զքեզ ի յառաջին գործ քո՝ որ զըմպելին մատուցանելի առաջի թագաւորին:
- 54/ Եւ նոյնպէս եղեւ պատմութիւնն Յովսէփու՝ զոր ասաց վասն նորա. եւ ասէ Յովսէփ ցմատրքովակն՝ թէ եւ զիս յիշեա առաջի թագաւորին: Եւ եղեւ ի հանել նորա տարան առ թագաւորն՝ եւ կարգեցին զնա ի գործս իւր առաջին. եւ մոռացաւ մատրքովակն զպատուէրն Յովսէփու. եւ ոչ յիշեաց զնա՝ մինչեւ անցին ի վերայ երեք ամբ:
- 55/ Եւ յայնժամ ետես թագաւորն փարաւոն երազս զարհուրելի՝ եւ կոչեաց առ ինքն զամենայն գիտնականքն եւ զիմաստունսն իւր՝ զի պատմեսցեն զերազն. եւ ամենեքեան ոչ կարացին մեկնել զերազն թագաւորին. եւ յոյժ բարկացաւ թագաւոր ի վերայ նոցա, եւ տրտում կայր, զի ոչ ոք էր որ մեկնէր զերազն նորա. յայնժամ ի միտս եկեալ մատրքովակն՝ եւ յիշեաց զբանն Յովսէփու: Եւ եմուտ առաջի թագաւորին. եւ ասէ ո՞վ թագաւոր մահապարտ եմ ծառայս քո. իբրեւ եհարց թագաւորն զբանն. եւ ասէ մատրքովակն՝ յորժամ բարկացար դու մեզ, ո՞վ թագաւոր եւ եղեր զմեզ ի բանդի. եւ մեք երկոքեանս երազ տեսաք՝ եւ տրտմեալ էաք վասն երագոյն: Եւ յայնժամ եկն Յովսէփ եւ մեկնեաց մեզ զերազն մեր՝ եւ զոր պատմեաց մեզ՝ այնպէս եղեւ. եւ որպէս ասաց նա մեզ:
- 56/ Յայնժամ հրամայեաց թագաւորն եւ ասէ՝ երթ կոչեա զայրն՝ զի թերեւս զերազս մեր պատմեսցէ. եւ իբրեւ կոչեցաւ Յով/ fol.

752. ի lost by haplography.

338r /սէփ ի թագաւորէն. եւ ելաւ⁷⁵³ ի բանդէն եւ եկն առաջի թագաւորին. ասէ թագաւորն ցՅովսէփ կարիցես հանել զերազն իմ զոր տեսի: եւ ասէ Յովսէփ՝ ո՛վ թագաւոր ոչ է կարողութիւն մարդոյ այդպիսի՝ այլ շնորհքն Աստուծոյ է որ տայ մարդկան գիտենալ զերազն եւ պատմել. ասասցէ թագաւորն զերազն, եւ յայտնէ մեզ Աստուած զմեկնութիւն նորա:

57/ Եւ իբրեւ զիտաց թագաւորն եթէ կարող է Յովսէփ մեկնել զերազն: Ասէ թագաւորն տեսի ես ի զիշերի միում երազ՝ եւ ահա է երինճք զերք եւ պարարտք ելանէին եւ արածէին առ ափն գետոցն.⁷⁵⁴ Եւ յետ այսորիկ տեսի եւ ահա այլ է երինճք նուազք եւ նիհարք, եւ չորացեալք ելանէին եւ ուտէին զգէր եւ զպարարտ երինճսն՝ եւ ոչ երեւէր ի փորի նոցա. եւ յայնժամ զարթեայ՝ եւ դարձեալ ննջեցի. եւ տեսի է փունճ հասք ելեալք յափն գետոյն ստուարք եւ ատոք. եւ ցորեն զէր ի մէջ հասկին. եւ զեղեցիկ տեսանելով: Եւ յետոյ տեսի. ահա եւ այլ է հասք ցորենոյ ելանէին, վտիտք եւ նուազք որ ոչ կայր հատ ցորենոյ ի մէջ նոցա. եւ կլանէին զհասկերն.⁷⁵⁵ որ ցորենալիցն էին, որպէս նուազք երինճքն. զգէր երինճքն կերան. եւ ոչ երեւէր ի փորի նոցա. այս է երազն իմ:

58/ Յայնժամ ասէ Յովսէփ. Աստուած մեծ իրս ցուց արքայիդ. զոր ինչ լինելոց է, ապայ ժամանակ աշխարհիս այսմիկ. եօթն երինճքն առաջինքն / fol. 338v / զէրքն եւ պարարտք է տարի լիութիւն գայ. եւ առատ ամենայն ինչ որ ոչ եղեալ այնպիսի լիութիւն ի վերայ երկրի. եւ է երինճքն նուազքն է տարի սով գայ՝ որ ոչ գտանի հաց ի վերայ երկրի:

59/ Եւ արդ թագաւոր տես թէ որպէս հոգասցես աշխարհս քո. զի մի կորիցեն ի սովոյ. ընտրեսցես քեզ այր իմաստուն զոր կացուցես ի վերայ աշխարհիս, որ մարթասցէ հոգալ եւ ժողովեսցէ ցորեան որով կերակրէ աշխարհս քո ի յաւուրց սովոյ:

60/ Յայնժամ ասէ փարաւոն թագաւորն Եգիպտացոց ցՅովսէփ. ստուգապէս հոգի Աստուծոյ զոյ ի քեզ. եւ ոչ որ կարէ այդպէս ի մարդկան մեկնել զերազն որպէս դու մեկնեցեր եւ ոչ որ կարասցէ հոգալ զաշխարհս իմ զի մի կորիցէ ի սովոյ: Բայց միայն զքեզ պարգեւեաց մեզ Աստուած կերակրիչ, եւ բաշխիչ եւ դարմանօղ աշխարհիս իմոյ: եւ ասէ թագաւորն ցՅովսէփ դու

753. Nonclassical form.

754. Plural. A singular is demanded by the story: perhaps graphic յ/ց.

755. Note medieval Armenian plural ending.

- լիցիս՝ թագաւոր եւ իշխան ի վերայ ամենայն երկրի մերոյ. եւ ես միայն թագիւս ի վեր քան զքեզ. այլ դու հաւասար գլխոյ իմոյ լիցիս. եւ ոչ ոք դիմադարձ լիցի քեզ. զի ունիցիս իշխանութիւն սպանանել եւ կեցուցանել զոր եւ կամիս. եւ հրաման ետու քեզ տէր լինել ի վերայ աշխարհիս Եգիպտացոց.
- 61/ եւ ետ թագաւորն զմատանին իւր զիշխանականն ի ձեռս Յովսէփու. որով զիշխանութիւն ընդ նմին ետ: Եւ էառ Յովսէփ զիշխանութիւն եւ թագաւորեաց ի վերայ Եգիպտոսի. որպէս ասէ մարգարէն Դաւիթ.⁷⁵⁶ զամենայն յանցս չար/ fol. 339r / չարանացն՝ որ էյանց ընդ Յովսէփ. խոնարհ արարին ի կապանս զոտս նորա, եւ էանց ընդ երկաթ անձն նորա: մինչեւ եկեսցէ բանն Աստուծոյ՝ որ ուխտեաց, Աբրահամու, Բազմանալ զաւակի նորա օտար երկիր. եւ բանդն փորձեաց զՅովսէփ զհամբերութիւն նորա եւ զողջախոհութիւն Յովսէփու յայտնի կամեցաւ առնել, եւ երեւի Աստուած. եւ ապա ասէ թագաւորելոյն:
- 62/ եւ յայնժամ առաքեաց թագաւորն եւ ելոյծ զնա. եւ իշխան ժողովրդեան եթող զնա. ի վերայ ամենայն գանձուցն Եգիպտացոց: խրատել զիշխանս նոցա Յովսէփ որպէս զինքն. եւ զծերս նոցա իմաստունս արասցէ. այս ամենայն կատարեցան ի վերայ Յովսէփու.
- 63/ եւ էառ Յովսէփ զթագաւորութիւնն եւ նստաւ ի վերայ Եգիպտոսի. յայնժամ Յովսէփ Լ ամաց էր. եւ 2 ամ թագաւորեաց Յովսէփ Եգիպտոս: Եւ սկսաւ գալ տարիքն ի լիութիւն ամենայն բարեաց աշխարհին. եւ Յովսէփ շինեաց ամբարայնոց մեծամեծս որ⁷⁵⁷ զցորեան երկրին ժողովէր եւ ամբարեց զբազմութիւն ցորենոյն ամենայն աշխարհին. զի այլ ոչ ինչ առնոյր զհարկ աշխարհին՝ ոչ ոսկի եւ ոչ արծաթ. բայց միայն ցորեն. եւ ժողովեաց զայն Է տարին՝ եւ էարկ ամբարայնոցն:
- 64/ Եւ ապա յետոյ Է տարոյն լիութեանն, սկսաւ գալ. եւ եօթն տարի սոփս. եւ Յովսէփ զեօթն տարու ցորենն սկսաւ բաշխել աշխարհին. եւ զոր յառաջն ոչ առնոյր ի հարկն ոսկի եւ / fol. 339v / արծաթ բայց միայն ցորեն. այժմ առնոյր զոսկի եւ զարծաթն. եւ տար erasure ca. 7 letters եւ ժողովեաց Յովսէփ զանձս բազումս. եւ եղև սով մեծ ընդ ամենայն աշխարհն

756. Ps 105(104):17–22.

757. Reading որ as ուր.

- Եգիպտացւոց՝ եւ Յովսէփի բաւական եղև ժողովեալ հացին գերկիրն ամենայն կերակրել.
- 65/ Եւ եկն սոփա երկիրն Քանանացւոց. յորում Յովսէփայ հայրն եւ եղբարքն բնակեալ էին. եւ լուաւ Յակոբ թէ գտանի կերակուր Եգիպտոս. եւ առաքեաց զորդիսն իւր զեղբարքն Յովսէփու, եւ եղբարքն Յովսէփու ոչ էին լուեալ զթագաւորելն Յովսէփու յԵգիպտոս. զի մոռացեալ էին զՅովսէփ զի Իհւ ամ անցեալ էր ի վերայ վաճառելոյն. եւ նոքա ոչ գիտացին զշնորհսն Աստուծոյ, զոր տուեալ էր Յովսէփու՝ եւ ոչ ակն ունէին թագաւորութեանն նորա:
- 66/ Իսկ առեալ եղբարցն Յովսէփու զգրաստ իւրեանց եւ արծաթ բազում եկին Եգիպտոս առ Յովսէփ գնել հաց. եւ Յովսէփ նստեալ իշխանութեան թագաւորութեանն. իբրեւ եկին եղբարքն նորա երկիր պագին նմա Յովսէփու. եւ ոչ ծանեան գնագի եւ ոչ իսկ կասկած կայր նոցա, այնպիսի թագաւորելոյն⁷⁵⁸ Յովսէփու. եւ Յովսէփ ծանեալ զեղբարքն իւր ոչ էտ իւր եղբարցն ծանօթութիւն. այլ իբրեւ անծանօթ եղեալ՝ ի ծածուկ սրտին լայր. եւ յիշէր զ vacat 2 letters գուր եղբայրութեանն. յայնժամ ասէ Յովսէփ ընդ եղբայրս իւր ուստի՝ էք, կամ ո՞ր <յ>աշխարհէ / fol. 340r / կամ թէ ոչ էք հացագին, այլ լրտեսէք՝ եկեալ լրտեսել զաշխարհս. իսկ նոցա անկեալ առ ոտս Յովսէփու՝ աղաչէին զի մի բարկացի տիրութիւն նորա ի վերայ նոցա եւ ասեն՝ ծառայք քո եմք: եղբայրք ԲԺ-ան էաք. միոյ հօր որդիք. զմինն գազանն յափշտակեաց ի դաշտին՝ եւ միւսն փոքրիկ է կայ ի տանն առ հօր մերում. եւ հայր մեր ծերացեալ է, եւ ծառայքս քո հովիւ եմք՝ եւ ոչ պատերազմօղբ:
- 67/ Ո՛վ անմտութեան եղբարցն՝ զի թէպէտ զհայրն խաբեցին վասն Յովսէփու՝ թէ գազանն եկեր գնա. աստ առաջի եղբօրն զիա՞րդ կամէր ստել զի ոչ ոք էր, որ վրէժխնդիր լինէր Յովսէփու թէ ընդէ ր վաճառեցիք գնա. եւ նոքա սուտ խօսէին եւ ոչ գիտէին թէ նա էր Յովսէփն զոր նոքա սուտ խօսէին եւ գազանակեր ասէին գնա՝ որ թագաւոր կայր ի վերայ նոցա. եւ զի այսպէս կայր էր⁷⁵⁹ նախանձ չարութեանն որ տալ իմանալ զինչ գործէ կամ զինչ խօսի:
- 68/ Բայց դու տես զիմաստութիւնն Յովսէփու. եւ զանոխակալութիւն նորա զի ոչ յիշեաց զչարութիւնն նոցա

758. Abbreviation mark omitted.

759. էր *inter lines*. One verb is superfluous, apparently կայր.

եւ ոչ զառնելիքն եղբարցն չար գործոցն այլ վաճառեցին զնա. եւ նա ոչ յանդիմանեաց զնոսա. որ ասացին զնա գազանաբէկ լեալ. եւ ոչ ասաց նոցա, թէ ոչ ահաւասիկ ես եմ Յովսէփ. զոր դուք գազանաբէկ ասէք. եւ այժմիկ թագաւոր եմ, զի ա ղո / fol. 340v / ստէք առաջի իմ. մի թէ եւ զիս կամիք խաբել, որպէս զհայրն իմ խաբեցէք՝ եւ զիս գազանաբէկ ասացիք նմա. բայց զի ամենայն աստուածային շնորհօքն էր զարդարեալ Յովսէփի. հեզէր եւ խոնարհ անոխակալ եւ անյիշաչար. ոչ ասաց եւ ոչ յանդիմանեաց զնոսա՝ այլ իմաստութեամբն զմարդասիրութիւնն եցոյց նոցա.

- 69/ Եւ եղ առաջի նոցա սեղան՝ եւ կերակրեաց զնոսա: եւ ասէ ցնոսա՝ թէ այդպէս է զոր ասացերդ թէ հայր մեր ծերացեալ է, եւ մի եղբայրն փոքրիկ առ հօրն՝ այլ զմինդ ի ձէնջ ոչ թողից եւ պահեցից առ իս մինչեւ զմիւս եղբայրն առ իս բերիցէք, եւ ապա արձակեցից զձեզ. եւ նոքա հաւանեալ թողին զՇմաւոն եղբայրն իւրեանց՝ գրաւական Յովսէփու՝ որ թագաւորն էր:
- 70/ Եւ հրամայեաց զի բարձին զգրաստս իւրեանց հաց՝ եւ եղեալ զարծաթն ի բեռինս նոցա. եւ զնացին առ հայրն իւրեանց Յակոբ՝ եւ սկսեալ պատմեցին զվիշտսն եւ զըմբռնանքն Յակոբու՝ զոր արգիլեցոյց Յովսէփ զեղբայրն⁷⁶⁰ զՇմաւոն. այլ պատիւն եւ զմեծարանսն⁷⁶¹՝ զոր Յովսէփ արար նոցա. իսկ հայրն հարցանէր վասն որդւոյ իւրոյ Շմաւոնի. եւ նոքա ասեն Եգիպտացոց տէրն ցորենոյն՝ որ վաճառէր, նա զրպարտեց զմեզ եւ ասէ լրտես էք. եւ ասենք ոչ եմք այլ ծառայք քո որդիք եմք հօր մերում. եւ մի եղբայր փոքրիկ առ հօր մերում կայ. եւ նա ասէ մեզ՝ եթէ ոչ էք լրտես որպէս ասէքդ՝ թողէք զմին եղբայրս առ իս գրաւական մինչեւ զփոքր եղբայրն ձեր / fol. 341r / բերիցէք առ իս, եւ ապա հաւատամ ձեզ թէ ոչ էք լրտես եւ ոչ նենգաւորք.
- 71/ Եւ արդ հայր մեր՝ հրամայեա զորդիդ քո Բեն-ի-ամենի՝⁷⁶² զի տարցուք եւ թափեցուք զՇմաւոն. եւ այլ հաց գնեցուք եւ բերիցուք բաւական մեզ. եւ յայնժամ տրտմեցաւ Յակոբ հայրն նորա՝ եւ ասէ վա՛յ ինձ որդեակք իմ, զի մանկակոտոր եւ որդէկորուստ արարիք զիս. զՅովսէփ գազանակեր ասացիք լինել, ու⁷⁶³ զՇմաւոն թէ Եգիպտոս փաւց. եւ զԲենիամենի այլ

760. զեղբայրն in margin.

761. մեծարանքն would be expected.

762. The manuscript has Բենիամենի, which is corrupt.

763. Postclassical form.

- կամիք հանել յինէն. յայնժամ յառաջ եկաց աւագ որդին եւ ասէ ընդունի՛ր ցիւղը իւր. հայր՝ մի՛ ⁷⁶⁴ բարկանար մեզ. Յովսէփ ի գազանէն յափշտակեցաւ. իսկ Շմաւոն՝ ի թագաւորէն Եգիպտացոց ընթոնեցաւ: զի կամէր զամենեսեան զմեզ սպանանել. արդ ողորմեցաւ մեզ միայն գրաւական առեալ զՇմաւոն. մինչեւ տարցոյք զԲենիամի<ն>, որով թափեցոյք զՇմաւոն. եւ ապա զերկոսեանն հանցոյք: եւ ես Ռուբէն երեշխաւոր որդւոց քոց, զի տեսցես գնոսա՝ եւ ուրախացիս:
- 72/ եւ այնպէս հաւանեցեալ զՅակոբ հայրն իւրեանց. զի թողոցու զԲանիամենի:⁷⁶⁵ եւ առեալ նոցա զԲենիամենի զկրսեր եղբայրքն⁷⁶⁶ իւրեանց եւ իջին յԵգիպտոս՝ զի գնեսցեն հաց ի կերակուր, որպէս գառաջինն, եւ իբրեւ գնացին առաջի Յովսէփու, եւ երկիր պագին նմա. եւ յորժամ ետես Յովսէփ զԲենիամենի. եւ շարժեալ աղէտն՝ եմուտ ի սենեակն, եւ ելաց սաստիկ / fol. 341v / դառնապէս՝ զի յիշեաց զգուր եղբայրութեանն. զի նոքա միայն էին եղբայր համամայրք եւ միահայրք. եւ իբրեւ ելաց Յովսէփ՝ քանզի շարժեցան աղիքն եւ գուրն ի վերայ Բենիամենի. եւ յայնժամ առեալ Յովսէփ ջուր՝ եւ լուացաւ. եւ հրաման եղ սեղան կազմել. եւ եղեալ առաջի եղբայրն. եւ նստոյց զեղբարսն ըստ կարգի, որպէս եւ ծնեալ էին. նոյնպէս նստոյց եւ զԲենիամենի ի մօտ առ ինքն ի սեղանի. եւ եղ զմասն եւ զբաժինն Բենիամենի մեծ քան զայլ եղբարցն. եւ յորժամ կերակրեցան չափեաց նոցա զցորեանն եւ եբարձ զգրաստս նոցա:
- 73/ Իսկ գաղտնաբար զոսկի բաժակն՝ որով Յովսէփ զգինին ըմբեր. ետ ի բերին զԲենիամենի, որ ոչ ոք իմացաւ. եւ իբրեւ ելան ի ճանապարհս իւրեանց, եւ Բենիամենի զհետ նոցա. յայնժամ առաքեաց շրութակս զհետ եղբարցն՝ եւ ասէ, զոսկի բաժակն իմ տարան գողութեամբ. յայնժամ հասեալ զօրականացն՝ եւ ըմբոնեցին զամենայն քաւրանն,⁷⁶⁷ եւ ասեն՝ ո՞վ էառ զոսկի բաժակն թագաւորին. ընդէ՛ր գործեցիք՝ զմահաբեր գողութիւնդ՝ քանզի թագաւորն մեր բարկացեալ է, արդ տեսէք ո՞րք ի ձէնջ զվսասս գործեալ է:
- 74/ Իբրեւ լուան զբանն զայն՝ եւ տրտմեցան ամենեքեան եւ ասեն

764. Thus the manuscript. A *šešt* would be expected.

765. Observe that quite often this name has a suffixed *-ի* when, as here, it is not in an oblique case.

766. Observe the anomalous plural ending.

767. A variant orthography or a corruption of *քաւրան*, which appears in §20.

ոչ գիտեմք զիրդ զոր ասեքդ: Եւ յայնժամ իջուցեալ զբեռնսն ի գրաստեն ի վայր, եւ բացեալ զամենեցուն զհակ քրձիցն. եւ գտեալն⁷⁶⁸ / fol. 342r / զբաժակն ի քուրձն Բենիամենի. իբրեւ տեսին զայն եղբարցն՝ դարձան ի վերայ Բենիամենի. եւ բազում բանիւք արհամարհեցին զնա՝ եւ այնպէս ասէին. գիտեմք զբնական զչարաբարութիւնդ ձեր, քո եւ եղբօր քում. վասն այսորիկ եւ նա գազանաբէկ լեալ, զի ամբարտաւանութեամբ թագաւորել կամէր, եւ ետես Աստուած զհպարտաբարս նորա, եւ մատնեաց զնա ի ձեռս գազանի՝ որ ոչ է եւ դու այնպէս կամեցար. գողութիւն. եւ զբարկութիւն թագաւորին ածել ի վերայ մեր. եւ վասն քո չար բարուցն որ ցանկացար ոսկի բաժակիդ՝ եւ արդ զամենեսեան կամի սպանումն ածել. յայնժամ դարձեալ ասեն ընդ սպասաւորսն թագաւորին՝ ահաւասիկ ծառայ թագաւորութեան եղիցի որ զգողութիւնդ արար:

75/ Իսկ նոքա կալեալ զԲանիամենի, եւ զեղբարսն իւր: Եւ յայնժամ սկսաւ սաստիւ խօսել ընդ նոսա Յովսէփ՝ այդ է փոխանակ սիրոյն զոր ես ցուցի ձեզ. եւ արարի եւ կերակրեցի զայդ արարիք, որ գողութեամբ յափշտակեցիք զոսկի բաժակն իմ. եւ թէ ես զձեր խելացդ առնեմ՝ եւ զձեր առնելեացդ՝ ապա զամենեսեանդ զձեզ սպանանէի, զի այտպէս իսկ զբանէ չարք էք եւ չարանախանձք:

76/ Իսկ եղբարքն ամենեքեան անկեալ առաջի՝ նորա լային դառնապէս եւ ասէին. մի բարկանար դու մեզ ո վ թագաւոր զի անպարտ եմք մեք ի Քսասուդ յայդմանէ՝ այլ միային փոքրաւոր տղայդ՝ այդ է / fol. 342v / պարտական մեղացդ զի տխմար է. այդպէս է բնութիւն դոցա՝ զի եղբայր դորա Յովսէփ այդպիսի էր, զի ինքն ինքենէն թագաւորել կամէր՝ եւ նստեալ մեզ երազ պատմէր նշանակ թագաւորութեանն. վասն այն ետես Աստուած զանմտութիւնն նորա՝ եւ կերակուր ետ գազանի՝ եւ ոչ եհաս թագաւորութեանն. նոյնպէս եւ տղայդ այդ ոչ իրաց զմեզ ոչ եհարց, որ ով գողացաւ զոսկի բաժակդ՝ եւ արդ մեք անպարտ եմք ի Քսասուդ ծառայքս քո:

Յայնժամ ասէ Յովսէփ եթէ այդպէս է զոր ասեքդ՝ թէ դուք անպարտ էք՝ ես զնա, որ պարտական է ինձ ի ծառայութիւն կացուցից. եւ դուք երթիցուք զճանապարհս ձեր:

77/ Յայնժամ որ երեց եղբայրն է նոցա Ռուբէն յառաջ եկաց եւ

768. An erasure mark surmounts է:.

երկիր պագ թագաւորին Յովսէփայ եւ ասէ. ո՛վ թագաւոր՝ նախ զիս սպան եւ ապա առցես զԲենիամին⁷⁶⁹ քեզ ծառայ՝ զի եւ երաշխաւոր եմ առեալ զդա՝ եթէ ոչ տանիմք զդա առ հայր մեր՝ ոչ կարեմք տեսանել զերեսն հօր մերում. զի ամենեքեան մեք ամօթով եմք՝ զի դայ է հօրն փոխանակ Յովսէփայ, զոր եկեր գազան. եւ թէ զդայ ոչ տեսանէ հայրն մեռանի ի տրտմութենէն. զի կուրացեալ է ի լալոյն վասն Յովսէփայ. եւ այլ չունի զոք մխիթար. եւ այժմ ո՛վ թագաւոր պարտ է քեզ քաղցրանալ եւ առնուլ զօրհնութիւնս հօր մերոյ Յակոբայ. քանզի եւ նա իսկ աստուածատես է՝ եւ զոր նա օրհնէ, օրհնեալ լիցի, եւ զոր անիծէ / fol. 343r / անիծեալ լիցի. եւ այժմ մի ածեր զանէծս հօրն ի վերայ մեր եւ ի վերայ քո. այլ արդ լուր ր աղաչանաց մերոց ո՛վ թագաւոր՝ եւ թող զպատանեակդ Բենիամին. եւ կամ սպան զմեզ զամենեսուն՝ զի ոչ կարեմք զնա տրտում տեսանել. կամ զծերութիւն նորա ցաւօք եւ տրտմութեամբ իջուցանել ի դժոխս. զի լաւ է թէ զամենեսեան ոչ տեսանէ հայրն մեր՝ քան զպատանեակդ զայդ:

78/ Իբրեւ զայս ամենայն կատարեաց Ռուբէն, եւ այլ եղբարքն լալով առաջի Յովսէփայ, եւ յայնժամ շարժեցաւ գութ եղբայրութեան, եւ հօրն յիշատակ որ ծերացեալ էր վասն սիրոյ Յովսէփայ՝ յայնժամ ոչ կարաց համբերել. այլ յայտնեաց զինքն Յովսէփի եղբացն իւրոց. եւ արտասուօք ասէ, ո՛վ եղբայրք յիմարք եւ ծառայք չար նախանձու եւ ատելութեան զձեզ⁷⁷⁰ ոչ կարացիք ճանաչել զիս քանզի եւ եմ եղբայրն ձեր այն զոր դուք վաճառեցիք, եւ զհայրն մեր խաբեցիք թէ գազանն է յափշտակել զիս, եւ եմ Յովսէփն, զոր դուք թագաւորել ոչ կամէիք ի վերայ ձեր. եւ եմ եղբայրն ձեր՝ զոր դուք յօտարութիւն վաճառեցիք. եւ եմ Յովսէփն՝ զոր դուք սպանանել կամեցայք եւ ետուք ի գերութիւն վաճառեցիք:

79/ Բայց <Աստուած>⁷⁷¹ հարց իմոց ոչ եթող զիս, եւ ոչ ընդ վայր եհար զիս. դուք զիս ի ծառայութիւն վաճառեցիք՝ եւ իմ գնալովս մեծանալ կամէիք՝ Բայց Աստուած թագաւոր արար զիս որպէս տեսանէքս. դուք ոչ կամեցայք զերազն թագաւորութեան իմոյ ի գլուխ ելանել: Բայց / fol. 343v / Աստուած ոչ<⁷⁷² արար ի ձեր սրտիցդ: այլ կատարեցաւ երազն իմ, եւ արար զիս թագաւոր

769. ի2° over ե p.m.

770. It is difficult to construe this accusative.

771. Editor's emendation; omitted from the manuscript.

772. Editor's emendation of the relative pronoun որ.

- որպէս եւ այժմ տեսանէքդ. եւ ահա կատարեցաւ երագն իմ. եւ դուք եկէք այս քանի անգամ երկիր պագանէք (sic!) ինձ:
- 80/ իբրեւ լուսն գայն երկիր պագին, եւ զամօթի հարան եւ անկաւ ահ ի վերայ նոցա. եւ մոռացան զկեանս իւրեանց, եւ անկաւ խաւար ի վերայ աչաց նոցա. ի յառաւել ամօթոյն եւ յերկիւղէն մութն կալաւ զամենեսեան՝ եւ ամենեւին ի վեր ոչ կարէին հայել կամ տեսանել զերես Յովսէփայ. այլ ամօթով ընդ գետինն հայէին՝ եւ ոչ գիտէին տալ պատասխանի Յովսէփայ. զի այլագունեցան երեսք նոցա՝ եւ սպառեցան բանք ի մտաց նոցա. եւ կապեցան լեզուք ի քիմս նոցա. եւ եղեն դէմք նոցա իբրեւ մահապարտից. եւ ահա նման էր օրն այն մահապարտից թագաւորի.
- 81/ եւ յայնժամ իմացեալ թագաւորն կոչեաց զնոսա եւ հարցանէր զպատճառս չարութեան նոցա՝ եւ ոչ նոքա կարէին տալ պատասխանի նորա.⁷⁷³ այսպէս եղեն եղբարքն Յովսէփու իբրեւ զանբանս կային բերակապք առաջի { }⁷⁷⁴ եւ ոչ կարէին խօսել զի գիտէին զառնելիքն չարութեան իւրեանց. եւ ինքեանք իւրեանց դատաստանս առնէին եւ ասէին ի վերայ իւրեանց վա յ ի վերայ անձանց մերոց զի արժանի եղաք դառն մահու եւ դատապարտութեանն:
- 82/ Յորժամ ետես Յովսէփ զամօթի՝ եւ զերկիւղի նոցա որ ինքեանք զինքե/ fol. 344r /անս դատապարտէին. ապա քաղրագոյն երեւեցաւ նոցա Յովսէփ զի հոգի առնուցուն՝ եւ մի մեռանիցին՝ յահէն եւ յերկիւղէն. յայնժամ Յովսէփ խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ.
- 83/ Ո՛վ եղբայրք իմ եւ որդիք հօր իմոյ Յակոբայ՝ մի երկնչիք, զի ոչ եմ նենգաժոտ իբրեւ զձեզ. զի ահա մատնեաց Աստուած զձեզ այսօր {եւ այլ}. եւ այլ յառաջագոյն ի ձեռս իմ. եւ թէ կամեցեալ էի զձեզ սպանանել՝ կամ այլ նեղութիւն չարչարեալ էի որպէս եւ դուք գիտէք զձեզ արժանի տանջանաց վասն չար գործոց ձերոց, զոր դուք առ իս արարիք՝ կարօղեմ եւ ես փոխարէն առնել ձեզ որպէս կամիմ ըստ ձեր արժանեացող որ ոչ ապրէիք ի ձեռաց իմոց. բայց տեսէք եւ զիտացիք զառաջին մարդասիրութիւնն՝ զոր ես առ ձեզ արարի. եւ այժմ մի երկնչիք զի որ զչարութիւնն ձեր Աստուած ի բարին դարձոյց. ապա եւ ես ոչ յիշեմ զչարութիւնն ձեր եւ ոչ պահեմ ռիս վասն

773. նոքա is genitive; a dative would be expected.

774. A word has fallen out.

չար գործոց ձերոց զոր գործեցիք դուք՝ այլ թողեալ եմ զմեղս ձեր զոր մեղաք դուք առ իս, եւ մի երկնչիք դուք յինէն, զի ոչ եմ եղբայրսպան. այլ մարդասէր՝ եւ ոչ եղբայրատեցո՜ւ այլ եղբայրասէր. եւ ոչ հատուցանեմ չար փոխանակ չարի. այլ հատուցից ընդ ձեր չարունեանն՝ ձեզ բարի՝ որ դուք սովամահ ի գրին կամեցաք առնել զիս. եւ զձեզ կերակ/ fol. 344v /րեցի ի սովոյ յայսմանէ :

